



Եթե կրակը մեծ չէ, և դեռ հրդեհ չի բռնկվել.

- Փորձեք հանգցնել այն ջրով, հողով, թաց հագուստով/կտորով, մատղաշ ծառերի ոչ չոր ճյուղերի կապոցով
- Թույլ մի տվեք, որ կրակը տարածվի դեպի ծառերի բներն ու սաղարթները

Եթե կրակը տարածվում է, և դուք անզոր եք այն հանգցնել.

- Պաշտպանվեք կրակից՝ հնարավորության դեպքում ծածկվելով խոնավ կտորով
- Հեռացեք հրդեհի ճանապարհից՝ ֆայելով դրա ուղղությունից շեղակի, քամու ուղղությամբ՝ դեպի մոտակա ջրավազան կամ համեմատաբար դատարկ տարածքներ՝ վարած արտեր, քարաբլուրի ժայռեր, ավտոճանապարհ և այլն
- Ամիջապես զանգահարեք 911 կամ տեղեկացրեք մոտակա բնակավայրի անտառատնտեսություն/հրշեջ ծառայություն

Դիզայն՝ Լիլիթ Հարությունյան | Deem Communications



Եվրոպական հարկազանցման եւ զարգացման գործառնականություն (ԵՀԳԳ) Արեւելեան երկրների սեւաստեղծ օրենսդրության կրթական եւ գիտականության (ԲԼԵԳ) և զարգացման եւ կրթության կրթության միջոցառումների ծրագիր

[www.enpi-fleg.org](http://www.enpi-fleg.org)

Ծրագրից նրբամասնավորում է Արևելյան զարգացման օրենսդրություն (ԱՀԳ) կողմից Արևելյան զարգացման համագործակցության (ԱՀԳ) միջոցներով և կրթությանը և զարգացմանը բանի կողմից՝ Մոլդովյան համալսարանի կողմից (WWF) և Մոլդովյան պատկանության միջազգային միության կողմից համագործակցությամբ:



ԱՆՏԱՌԱՅԻՆ  
ՀՐԴԵՀՆԵՐԻ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Անտառային հրդեհների միջինում 80-90%-ի առաջացման պատճառը մարդկային գործոնն է: Հրդեհ կարող է բռնկվել ինչպես անտառային տարածքում անփութության, այնպես էլ հարակից գյուղատնտեսական հանդակներում չոր խոտի և խոզանի այրումների հետևանքով:

**Հրդեհի հետևանքով.**

- Նվազում է մարդկանց համար անփոխարինելի օդի՝ թթվածնով հարստացումը
- Ոչնչանում են կենդանիներ և բույսեր, վնասվում է նրանց բնակավայրը
- Այրվում է անտառում կուտակված բնափայտը
- Հաճախ լինում են մարդկային զոհեր



**Ինչպես են առաջանում անտառային հրդեհները**  
 Անտառային հրդեհները հիմնականում առաջանում են ամռանը՝ չոր եղանակային, մասնավորապես երաշտի պայմաններում, հետևյալ գործոնների ազդեցության ներքո՝

**Բնական գործոններ**

- կայծակի հարված
- տորֆով հարուստ հողատարածքի ինքնայրում/ինքնաբռնկում
- ջերմաստիճանի կտրուկ բարձրացում և տեղումների երկարաժամկետ բացակայություն

**Մարդկային գործոններ**

- օրգանական մնացորդների, արոտավայրերի կամ խոզանի այրում
- սխալ վայրում վառած կամ չմարած խարույկ
- անփութորեն նետված լուցկի կամ ծխախոտի գլանակ
- սարքավորման սխալ օգտագործում և այլ պատճառներ



**ՀԻՇՆՔ**

Հնձած արտերի, խոտհարքների և արոտավայրերի այրումը ոչ միայն վտանգավոր է հարակից անտառների, այլև օգտակար չէ հողի համար և կարող է ազդել հետագա բերքատվության վրա. կրակը նվազեցնում է հողի խոնավությունը, վատթարացնում է հողի օրգանական կազմը և քայքայում է հողում պարունակվող օգտակար նյութերը:

**Ինչպես կարելի է խուսափել հրդեհից**

Հրդեհներից շատ դեպքերում կարելի է խուսափել՝ հետևելով այս պարզ կանոններին

**Ուշադիր եղեք անտառում վառված ծխախոտի և լուցկու նկատմամբ. նետերուց առաջ կտորեք այն և հավաստիացեք, որ հանգչել ու սառչել է**

**Առանց անհրաժեշտության խարույկ մի վառեք. հնարավորության դեպքում հողում խարույկի համար նվազեցնե՛րվ կրակի տարածման վտանգը**

**Խարույկը մարեք ջրով կամ հողով. տարածքը լե՛նուց առաջ հավաստիացե՛ք, որ անուկի բոլոր կտորները՝ նույնիսկ ամենափոքրը, մարել են**

**Չե՛րձ մնացեք անտառային և հարակից տարածքներում օրգանական մնացորդների, տերևների և չոր խոտի այրումից**

**ՀԻՇՆՔ**  
 ՀՀ օրենքով արգելվում է կենցաղային և արտադրական աղբի, խոզանի և տերևների այրումը:  
**Օրենքը խախտելու դեպքում սահմանված է պատիժ՝ նախազգուշացումից մինչև տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:**